

ԿՐԻՍՏԱԼՈՆ



Կրիստալոնը ջրում հեշտ լուծվող խելատային հիմքով, քլոր չպարունակող կոմպլեքս պարարտանյութ է մակրո և միկրոէլեմենտների հավասարակշռված քանակությամբ: Օգտագործվում է ինտենսիվ տեխնոլոգիաներով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության մեջ, արտարմատային սնուցման համար և կաթիլային ոռոգման համակարգերում: Արտադրվում է համաշխարհային հայտնի NUS ընկերության կողմից:

Կրիստալոնի ագրոքիմիական առանձնահատկությունները՝

- քիմիապես մաքուր և էկոլոգիապես անվնաս պարարտանյութ է, որը կարող է ապահովել մանկական և դիետիկ սննդի ստացման համար անհրաժեշտ էկոլոգիական մթերքների արտադրությունը;
- բույսի կողմից պարարտանյութի կենսածին տարրերի օգտագործման գործակիցը կազմում է 80 - 95 %;
- բարձրացնում է մշակաբույսերի դիմացկունությունը թունաքիմիկատների, եղանակային անբարենպաստ պայմանների (երաշտ, օդի ջերմաստիճանի կտրուկ իջեցում), սնկային և բակտերիալ հիվանդությունների հետևանքով առաջացող սթրեսային գործոնների նկատմամբ;
- բարձրացնում է մշակաբույսերի բերքատվությունը և բարելավում նրանց ապրանքային որակը;
- արագ և արդյունավետ կերպով բավարարում է բույսերի ֆիզիոլոգիական պահանջը մակրո և միկրոտարրերի նկատմամբ;
- բույսերի մեջ խթանում է կենսաքիմիական պրոցեսները, նպաստում նրանց պոտենցիալ բերքատվության իրացմանը;
- օգտագործվում են թունաքիմիկատների, աճի խթանիչների, հանքային պարարտանյութերի լուծույթների հետ՝ չփոխելով նրանց ազդող նյութը;
- հնարավոր է կիրառել pH մեծ միջակայք ունեցող լուծույթներում;

Խորհուրդ չի տրվում Կրիստալոնը խառնել այնպիսի պատրաստուկների հետ, որոնք պարունակում են պղինձ, ալյումին և այլ ուրիշ մետաղներ: Նախքան օգտագործումը Կրիստալոնը անպայման պետք է փորձարկել այլ թունանյութերի հետ համատեղությունը ստուգելու համար: Նստվածք չառաջանալու դեպքում կարելի է օգտագործել:

«Դարչնագույն Կրիստալոնը» դանդաղ է լուծվում ջրում, ի տարբերություն «Չատուկ Կրիստալոնի»:

Խորհուրդ է տրվում Կրիստալոնը լուծել ջրի 20⁰c դեպքում, բայց ոչ ցածր քան 10⁰c:

Կրիստալոնի լուծույթը չի կարելի թողնել չօգտագործված 5-6 ժամից ավելի և ենթարկել ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության: Կրիստալոնի բոլոր տեսակներն էլ պարունակում են միկրոէլեմենտների միևնույն բաղադրությունը:

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

արտարմատային սնուցման համար «Կրիստալոնի» օգտագործման

Չատուկ 18 + 18 + 18 + 3. Կիրառվում է վեգետացիայի ամբողջ ընթացքում ազոտի նկատմամբ մեծ պահանջարկ ունեցող մշակաբույսերի վրա (աշնանացան ցորեն, աշնանացան և գարնանացան գարի, եգիպտացորեն, վարունգ, կաղամբ, սոխ, պտղատու և դեկորատիվ մշակաբույսեր), ինչպես նաև զարգացման վաղ փուլերում՝ գարնանացան հլածուկի և շաքարի ճակնդեղի վրա: Պարարտանյութում ամիդային ձևով ազոտի առկայությունը նպաստում է հատիկային մշակաբույսերի ապրանքային արտադրանքում սպիտակուցի պարունակության ավելացմանը: Օգտագործվում է 3-5 կգ/հա նորմայով արտարմատային սնուցման ձևով:

Ղեղին 13 + 40 + 13. Կիրառվում է մշակաբույսերի (կարտոֆիլ, արևածաղիկ, ոլոռ, սոյա, աշնանացան և գարնանացան հլածուկ, պոմիդոր, խաղող, դեկորատիվ բույսեր), մշակության վաղ փուլերում, քանի որ պարարտանյութում առկա են ֆոսֆորի մատչելի միացություններ, որոնք նպաստում են բույսերի արմատային համակարգի և գեներատիվ օրգանների զարգացմանը: Բարձր արդյունավետություն նկատվում է բաց և փակ գրունտին պայմաններում «Կրիստալոնի» այլ տեսակների հետ 2-4 կգ/հա դոզայով համատեղելիս: Օգտագործվում է բոլոր տեսակի հողերում, սակայն առավել արդյունավետություն է նկատվում չեզոք և թույլ հիմնային հողերում:

Շագանակագույն 3 + 11 + 38 + 4. Պարարտանյութը պարունակում է համեմատաբար քիչ ազոտ, սակայն կալիումի, մագնեզիումի և ծծմբի պարունակությունը ավելի բարձր է: Երաշխավորվում է օգտագործել վեգետացիայի երկրորդ կեսին կալիումի դեֆիցիտ զգացող մշակաբույսերի (շաքարի ճակնդեղ, կարտոֆիլ, աշնանացան և գարնանացան հլածուկ, ձմերուկ, սեխ, տոմատ, ուշահաս կաղամբ, խաղող) և ամբողջ վեգետացիայի ընթացքում՝ սոխի, սխտորի վրա: Երաշխավորվում է 2կգ/հա դոզայով օգտագործել աշնանը աշնանացան մշակաբույսերի ձմեռումը լավացնելու համար: Կիրառվում է 3-5 կգ/հա դոզայով բոլոր տիպի հողերում, հատկապես բարձր արդյունավետություն է նկատվում կալիումի ցածր պարունակություն ունեցող ճմա-պողզոլային և ավազային հողերում:

Կարմիր 12 + 12 + 36 + 1. Պարարտանյութի մեջ պարունակվում է N:P:K 1:1:3 հարաբերություն և մագնեզիումի ու ծծմբի ցածր քանակություն: Նիտրատային միացությունների պարունակությունը ավելի քիչ է, քան ամոնիակայինը: Բաց գրունտում, այն կուլտուրաների համար, որոնք ունեն կալիումի պակաս, խորհուրդ է տրվում կիրառել վեգետացիայի զարգացման երկրորդ փուլում՝ հիվանդությունների դեմ դիմացկանության, բերքատվության, ինչպես նաև բերքի որակական հատկանիշների բարձրացման նպատակով: Կիրառման նորման արտարմատային սնուցման ժամանակ 2-4 կգ/հա է, իսկ արմատային սնուցման ժամանակ՝ 1-2 գ 1 լիտր ջրին:

Բույսերի արտարմատային սնուցման ժամանակ «Կրիստալոնի» բանվորական լուծույթի ծավալը չպետք է պակաս լինի 200-250 լ/հա - ից: